ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ ENGINEERING GROUP
ՍՊԸ LLC

«16» Հունվար 2026թ. № 83495629-9



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000031, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է
2024-06-20, «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ Փ., 7, 101 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 20.06.2029թ.

UG31-3C68-A29D-FFCC

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 83495629-9

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

«16» Հունվար 2026թ.

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0033, Կոմիտաս 12, հ.100
Address: 12 Ave. Komitas, n.100, Yerevan, 0033, RA
engineering.group@internet.ru
www.egproject.am
+374 43 06 70 09
+374 93 96 11 44

# ՀՀ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

*Պատվիրատու՝* Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

*Նախագծող՝* «ՍՊ2» ՍՊԸ
«ՄԱԼՈՆԱ» ՍՊԸ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԻՄՔ՝ Նախագիծը մշակվել է ըստ Մասիս համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության N ՆԹ-0259-26, 12.01.2026թ. Կադաստրային ծածկագիր՝ 03-003-0073-0231, մարզ Արարատ, համայնք Մասիս, Մասիս ք., 3-րդ թաղամաս, 4/10 հողամաս

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### Ճարտարապետական մաս

Մասիս քաղաքում բնակելի բակային հատվածում նախատեսվում է հիմնել մարզական պուրակ: Տարածքում ռետինե ծածկույթով մարզական սարքերով կահավորված մարզահրապարակից և հիմնական տեղական տրավերտինե սալարկմամբ ճեմուղուց բացի, մնացյալ տարածքները կա՛մ ավազածածկ են, կա՛մ խճածածկ: Ճեմուղիների ու արահետների նիշը պետք է համապատասխան լինի գոյություն ունեցող գրունտի նիշին: Տարածքում նախատեսվում է նաև բաց դասերի համար տեղադրել տաղավար, որտեղ կարող են կազմակերպվել տարբեր միջոցառումներ: Տարածքում նախատեսված է նաև գլխավոր մուտքի մասով մուտքային հովանոցի տեղադրում: Նախագծի այս փուլով նախատեսվում է նոր լուսավորության համակարգ, որն ինտեգրվելու է քաղաքային լուսավորության համակարգին: Այս փուլով տարածքի ոռոգում նախատեսված չէ:

Տարածքի ընդհանուր մակերեսը 1700 քմ է, որից՝

- Ջրաթափանց մակերես՝ 1137 քմ, 66.8%
  - Կանաչապատ մակերես՝ 731 քմ, 43.0 %
  - Մանկական խաղահրապարակ՝ 157 քմ, 9.2 %
  - Մարմարե խճապատ գոտիներ՝ 192 քմ, 11.3 %
  - Արահետներ՝ 107 քմ, 6.2 %
- Անջրաթափանց մակերես՝ 513 քմ, 30.2 %
  - Սպորտային մարզահրապարակ՝ 219 քմ, 12.9 %
  - Տրավերտինապատ ճեմուղի՝ 273 քմ, 16.0 %

- Բազալտապատ արահետներ՝ 21 քմ, 1.3 %

Տարածքում նախատեսվում է մուտքային հանգույց, սպորտային մարզահրապարակ, մանկական խաղահրապարակ և տաղավար: Սպորտային մարզահրապարակում տեղադրված են թվով 5 մարզասարքեր (Մարզասարք 1 (Համալիր մարզասարք), Մարզասարք 2 (Նորմատիվային), Մարզասարք 3 (Կանգնած հեծանիվ), Մարզասարք 4 (Ոտքերի մարզման համար), Մարզասարք 5 (Նստած հեծանիվ)), իսկ խաղահրապարակում նախատեսվում է 3 տիպի խաղասարք (Խաղասարք 1 (Սահասարք - մագլցման պատ), Խաղասարք 2 (Ճոճանակ), Խաղասարք 3 (Ճոճանակ-կշռվող)):

Մուտքային ցուցանակը նախատեսվում է իրականացնել 160x100x4 մմ և 160x100x5 մմ մետաղե խողովակներից և 1100x1600 մմ մուտքի ցուցանակից, ծածկը՝ պրոֆնաստիլ:

Հանգույցը ունի գետնածածկ, որը կազմված է՝

1. Տրավերտինի սրբատաշ սալարկում 50մմ
2. Խճային հիմք (0,5-5 մմ) 200 մմ
3. Կոպճային հիմք 100մմ
4. Տոփանած հող
5. Բնահող

Հանգույցի համար նաև նախատեսված է գծային լուսատու:

Հիմքերի մշակման համար անհրաժեշտ է պաշտպանիչ շերտ՝ պրոֆիլավորված ՊՎՔ թաղանթ (76.5 քմ) և ջրամեկուսիչ՝ փաթթոցային, երկշերտ (76.5 քմ):

Ըստ նախագծի՝ մարզահրապարակի ձախ կողմից նախատեսվում է մարմարե խճապատ գոտի: Տաղավարը հագեցած է բետոնե հիմքով նստարաններով և էկրանով: Տաղավարը նախատեսվում է իրականացնել 160x120x5 մմ և 120x60x4 մմ մետաղական սյուներով, էկրանին հարող պատը պետք է լինի երկաթբետոնե, 250 մմ հաստությամբ: Պատի վրա տեղադրված են 5 հատ վարդակ և 1 հատ մեկտեղանի անջատիչ: Էկրանը 3000x1690 մմ չափերի է:

Տաղավարի գետնածածկույթը՝

1. Բազալտե խճաքար 100մմ
2. Խճային հիմք (0,5-5 մմ) 200 մմ
3. Մետաղական թիթեղ՝ լաքապատ
4. Ստվերատար սիզամարգ
5. Հողախառնուրդ 250մմ
6. բուսահող (3/4)
7. տորֆ (2/4)
8. հրաքխային խարամ (1/4)
9. Տոփանած հող 200մմ
10. Բնահող

Տաղավարը հագեցած է նաև 4 հատ ուղղահայաց գծային լուսատուներով, որոնք տեղադրված են մետաղե սյուների երկայնքով:

Ծածկը իրականացված է պրոֆնաստիլի թիթեղներից (1200x2000 մմ): Ա առանցքի հատվածով տեղադրված է ջրահեռացման շղթա:

Տաղավարի բարձրությունը ըստ Ա առանցքի 2.56 մ է, իսկ ըստ Դ առանցքի՝ 3.35 մ:

Նստարանների բաղադրիչ մասերի համար անհրաժեշտ միջոցներն են՝

1. Հիմք՝ բուտաբետոն, 360x320x1640 (11 հատ) և 360x320x3440 մմ (4 հատ), 5.72 քմ, 4.4 քմ
2. Քար՝ տրավերտին, 330x400x1800, 19 հատ, 13.68 քմ
3. Մետաղական խողովակ, 20x15x1.5 մմ, 133 հատ, 305.9 գծմ
4. Սոճու փայտ հականեխիչ լաքային մշակմամբ (մեջքի հենակ), 30x100x800 մմ, 38 հատ, 3.05 քմ
5. Սոճու փայտ հականեխիչ լաքային մշակմամբ (նստատեղ), 30x400x1200 մմ, 114 հատ, 9.12 քմ

Լուսատուների բաղադրիչ մասերի համար անհրաժեշտ միջոցները՝

1. Կռած մետաղական թիթեղ 120×8 մմ, 109.33 գծմ
2. Պաշտպանիչ թիթեղ 5 մմ, 16.40 քմ
3. Պողպ. խողովակ Ø120×4 մմ, 377 գծմ
4. Մետաղական թիթեղ 150×150×5 մմ, 58 հատ
5. Հիմքի բետոնացում B20, 18.04 մ³
6. Հիմքի ամրանավորում Ø12 A500C, 58 գծմ
7. Հիմքի նախապատրաստական խճային շերտ, 1.64 մ³
8. Գրունտի քանդում 600մմ տրամագծով, 98.60 գծմ
9. Լուսատու, 2ական տեղադրված 29 հատ 4000 մմ սյան վրա, հզորությունը՝ 20 Վտ, պայծառությունը՝ 2000 լյումեն, լուսատվության բացվածքի անկյուն (աստիճան)՝ լայն / 120°, գունային ջերմաստիճան՝ 3000K, IP՝ IP67 և ավել, ղեկավարում՝ On/Off, 58 հատ

Աղբարկղերի բաղադրիչ մասերի համար անհրաժեշտ միջոցները՝

1. Քառանկյուն խողովակ 30×20 մմ, 36 գծմ
2. Մետաղական թիթեղ 6 մմ, 5.65 քմ
3. Բուտաբետոնե հիմք, 0.32 քմ

Ծածկույթների մանրամասներ՝

Ստվերատար սիզամարգ

1. Ստվերատար սիզամարգ, 731 քմ
2. Հողախառնուրդ 150-300 մմ բուսահող 3/4, տորֆ 2/4, հրաբխ. խարամ 1/4, 219.3 խմ
3. Հողի տոփանում 200-300 մմ, 731 քմ
4. Եզրագիծ՝ մետաղ. թիթեղ լաքապատ 2 մմ, 130.6 քմ

Տրավերտինե սրբատաշ սալերով ճեմուղի

1. Տրավերտինե սրբատաշ սալեր 50 մմ, 273 քմ
2. Խճային հիմք (0.5-5.0 մմ) 150 մմ, 41 խմ
3. Կոպճային հիմք (10-20 մմ) 150 մմ, 41 խմ
4. Հողի տոփանում 200-300 մմ, 273 քմ

Սրբատաշ բազալտե սալերով արահետ

1. Բազալտե սրբատաշ սալեր 50 մմ, 21 քմ
2. Խճային հիմք (0.5-5.0 մմ) 150 մմ, 3.2 խմ
3. Կոպճային հիմք (10-20 մմ) 150 մմ, 3.2 խմ
4. Հողի տոփանում 200-300 մմ, 21 քմ

Ռետինե ծածկույթով սպորտային մարզահրապարակ

1. Ռետինե ծածկույթ 10 մմ, 219 քմ
2. Նախաներկում (грунтовка) , 219 քմ
3. Բետոն (B15, ամրան Ø5 մմ, քայլ 150) 100 մմ, 219 քմ
4. Խճային հիմք (20-40 մմ) 200 մմ, 43.8 խմ
5. Կոպճավազային հիմք (10-20 մմ) 100 մմ, 21.9 խմ
6. Ջրամեկուսիչ, 219 քմ
7. Հողի տոփանում 150 մմ, 219 քմ

Խոշորահատիկ տեղական մարմարի խճով գոտիներ

1. Սպիտակ մարմարի խիճ (20-40 մմ) 100 մմ, 19.2 խմ
2. Խճային հիմք (0,5-5,0 մմ) 250 մմ, 48 խմ
3. Հողի տոփանում 200 մմ, 192 քմ

Խոշորահատիկ բազալտի խճով արահետներ

1. Խոշորահատիկ բազալտի խիճ (20-40 մմ) 100 մմ, 10.7 խմ
2. Խճային հիմք (0,5-5,0 մմ) 250 մմ, 26.8 խմ
3. Հողի տոփանում 200 մմ, 107 քմ

Կարմիր ավազով խաղահրապարակ

1. Կարմիր ավազ (կերամզիտ, շլակ 5-12 մմ)150 մմ, 23.6 խմ
2. Խճաքար (3-40 մմ) 150 մմ, 23.6 խմ
3. Հողի տոփանում 200 մմ, 157 քմ

Հողային աշխատանքներ, 192 խմ

## Կոնստրուկտորական մաս

ՀՀ Արարատի Մարզի, Մասիս քաղաքի քաղաքային այգում կառուցվող տաղավարի և մուտքային հանգույցի կոնստրուկտորական մասերը իրականացված են ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ճարտարապետական նախագծի հիման վրա և համապատասխանում են ՀՀ գործող շինարարական նորմերին և կանոններին:

1. **Տաղավարը** հատակագծում ուղղանկյունաձև է՝ 6.80 x 4.78 մ առանցքային չափերով միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմքերով, հենարային պատով (25սմ հաստության, երկտակ ամրանային ցանցով) և մետաղե հիմնակմախքով, վերջինս ամրակապվում է ժապավենային հիմքերին նախապես թողնված պողպատե ներդիրների միջոցով: Երկաթբետոնե ժապավենային հիմքերը հատակագծում իրականացված են տաղավարի հատակագծի արտաքին պարագծով, 50 x 50 և 50 x 40 սմ հատվածքի, միաձույլ B25 դասի ծանր բետոնից, ամրանավորված A500C դասի երկայնական ամրաններով և A240 դասի անուրներով: Տաղավարի սյուներն իրենցից ներկայացնում են C235 դասի պողպատե Ø 160x120x5 հատվածքի թեք խողովակներ: Տանիքի ծածկի գլխավոր հեծանները ընտրված են Ø 160x120x4 և Ø 160x100x4 հատվածքի, իսկ հաստատուն քայլով բաշխիչ հեծանները (կավարամածը)՝ Ø 120x60x4 հատվածքի: Որպես տանիքածածկույթ ըտրված է մետաղե չժանգոտվող թիթեղ:

Հիմնակմախքի կոնստրուկտիվ հաշվարկն իրակացվել է ստորև բերված բեռնվածքների ազդեցությունից.

***Մշտական.***

- Զողերի սեփական քաշ՝ · 1.05,
- Տանիքի ծածկույթի քաշ (պողպատյա տրամատային թիթեղ՝ 30 կգ/մ$^2$:

***Ժամանակավոր կարճատև.***

- Ձյան բեռնվածք՝ 100 · 1.4 = 140 կգ/մ 2:

***Հատուկ բեռնվածք.***

- Սեյսմիկ բեռնվածք:

Հաշվարկն իրականացված է 1-ին սեյսմիկ գոտու համար, գրունտի կարգը պայմանականորեն ընդունված է 3-րդ: Տեղափոխությունների և տատանման պարբերության ստուգման համար՝ $k_1$ = 0.8, իսկ ընտրված հատվածքների կրողունակության (ամրության, տեղային կայունության) ստուգման համար՝ $k_1$ = 0.3 **(սեյսմիկ հաշվարկն իրականացված է ըստ ՀՀՇՆ 20.04-2020 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ)**:

2. **Մուտքային հանգույցը**, ի տարբերություն տաղավարի, ունի բարձակային կոնստրուկտիվ լուծում՝ իրականացված երկու C235 դասի պողպատե Ø 160×100×5 հատվածքի ուղղաձիգ հենարան-սյուների վրա: Բարձակային հեծանները ընտրված են Ø 160×100×4 հատվածքի, իսկ հաստատուն քայլով կավարամածը՝ Ø 40×3 հատվածքի: Հանգույցի կրող համակարգի հաշվարկներում բեռներն ու ազդեցությունները կիրառվել են վերը նկարագրված տաղավարի վրա ազդող համապատասխան բեռներով:

**Փոսորակները բացելուց հետո հիմնատակերը պետք է ակտավորել ինժեներ-երկրաբանի մասնակցությամբ, անհրաժեշտության դեպքում հիմքերի կոնստրուկցիաներում կատարել փոփոխություն:**

Ե/բ միաձույլ հիմքերը նախատեսվում է կառուցել B25 դասի միաձույլ ծանր երկաթբետոնից բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Հիմքերի արտաքին մակերևույթները ջրամեկուսացնել և պատել պաշտպանիչ շերտով: Հիմքերի հիմնատակերի սառեցման խորությունը պետք է ճշգրտել տվյալ տեղանքի երկրաբանական փաստացի տվյալների հետ:

Հիմքերը պետք է լինեն B15 դասի բետոնից իրականացված նախապատրաստական շերտով, ջրամեկուսիչով և պաշտպանիչ շերտով:

Տաղվարի տանիքը իրենից ներկայացնում է մետաղական խողովակներով հավաքված ցանց, որի վրա ամրանում են պրոֆնաստիլի թիթեղները:

Բոլոր ներդիր տարրերը պետք է տեղադրել բետոնացման աշխատանքներից առաջ, ամրանային խարիսխները տեղային ամրակապել ե/բ հիմքի ամրաններին: Չնշված եռքային կարերի նիստերը ընդունել՝ $k_f$ = 4 մմ: Պողպատե տարրերը ընտրված են C235 դասի: Եռակցումները պետք է իրականացնել Э42А էլեկտրոդներով ( Ø4-5մմ ): Մետաղե բոլոր խողովակներն, ինչպես նաև ամրանային խարիսխների վերին եզրերը նախատեսվում է ներկել հակակոռոզիան ներկով:

Հիմքերի Г -աձև ամրանային խարիսխը (8Ø16 A500C) նախատեսվում է եռակցել մետաղե թերթին ամրանի արտաքին պարագծով:

| Տաղավարի հիմնակմախքի մանագիր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| № | Անվանում | | Երկ. (մմ) | Քանակ (հատ) | Քաշ(կգ) | |
| | | | | | 1 Տարրի | Ընդ |
| 1 | Ø 16 | A500C | 186 մ | 1 | 294 | 294 |
| 2ա | Ø 8 | A240 | 1800 | 37 | 0.7 | 26 |
| 2բ | Ø 8 | | 1600 | 152 | 0.6 | 96 |
| 3 | Ø 10 | A500C | 3870 | 54 | 2.4 | 129 |
| 4 | Ø 8 | | 5260 | 32 | 2.1 | 66 |
| 5 | Ø 12 | | 5260 | 4 | 4.7 | 19 |
| 6 | Ø 8 | A240 | 900 | 27 | 0.4 | 10 |
| 7 | Ø 8 | | 410 | - | - | - |
| 8 | □160 x 120 x 5 | | 2890 | 2 | 61 | 123 |
| 9 | | | 3550 | 2 | 75 | 150 |
| 10 | □160 x 120 x 4 | | 9150 | 2 | 156 | 313 |
| 11 | □160 x 100 x 4 | | 4900 | 2 | 78 | 155 |
| 12 | □120 x 60 x 4 | | 4660 | 14 | 50 | 705 |
| 13 | | | 540 | 30 | 6 | 175 |
| 14 | □100 x 60 x 4 | | 159 | 5 | 2 | 8 |
| ՆՏ-01 | – 310 x 270 x 12 | | 310 | 2 | 8 | 16 |
| ՆՏ-02 | – 330 x 270 x 12 | | 330 | 2 | 8 | 17 |
| ՆՏ-03 | – 270 x 250 x 10 | | 310 | 2 | 6 | 12 |
| 15 | – 125 x 75 x 8 | | 125 | 16 | 0.6 | 9 |
| 16 | – 160 x 160 x 8 | | 160 | 4 | 1.6 | 6 |
| a | Ø 16 | A500C | 350 | 48 | 0.6 | 27 |
| Hilti | Ø 14 | Հեղույս | - | 4 | - | - |

| Անվանում | Ծավ. (մ³) |
|---|---|
| Բետոն B25 (Հիմքեր, պատ) | 10.34 |
| Բետոն B15 (Նախ. շերտ) | 1.43 |

| Մուտքային հանգույցի հիմնակմախքի մանագիր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| № | Անվանում | | Երկ. (մմ) | Քանակ (հատ) | Քաշ(կգ) | |
| | | | | | 1 Տարրի | Ընդ. |
| 1 | Ø 14 | A500C | 28 մ | 1 | 33.4 | 33 |
| 2ա | Ø 8 | A240 | 1800 | 16 | 0.7 | 11 |
| 2բ | Ø 8 | | 1500 | 21 | 0.6 | 12 |
| 3ա | □160 x 100 x 5 | | 2810 | 1 | 55 | 55 |
| 3բ | | | 2823 | 1 | 55 | 55 |
| 4 | – 125 x 75 x 6 | | 125 | 8 | 0.4 | 4 |
| 5 | □160 x 100 x 4 | | 2540 | 1 | 40 | 40 |
| 6 | | | 2392 | 1 | 38 | 38 |
| 7 | | | 1123 | 1 | 18 | 18 |
| 8 | | | 1300 | 1 | 21 | 21 |
| 9 | □40 x 40 x 3 | | 1100 | 3 | 4 | 12 |
| ՆՏ-01 | – 310 x 250 x 12 | | 310 | 2 | 7 | 15 |
| a | Ø 16 | A500C | 350 | 16 | 0.6 | 9 |

| Անվանում | Ծավ. (մ³) |
|---|---|
| Բետոն B25 (Հիմքեր) | |
| Բետոն B15 (Նախ. շերտ) | |

## Էլեկտրատեխնիկական մաս

Նախագիծը կատարված է համաձայն գլխավոր ճարտարապետի առաջադրանքի և ՀՀՇՆ 22-03-2017- Արհեստական և բնական լուսավորում:
Դրվածքային հզորությունը կազմում է 2.4 կՎտ:
Նախագծվող տաղավարում տեղադրվում է P1 արկղը որը կոմպլեկտավորվում է մուտքային և ֆիդերային անջատիչներով, մթնաշաղային կամ ժամանակի ռելեյով ղեկավարվող արտաքին լուսավորության թողարկաման սարքավորումներով:
P1 արկղից մացվում են տաղավարի ներքին ցանցի 2 և տարածքի լուսավորության ցանցի 1 միաֆազ գծերը: Արտաքին լուսավորության գիծը անջատվում և միանում է -ձերքով կամ ավտոմատ եղանակով, իսկ ցանցը անցկացվում է խրամուղով երկպատ ճկախողովակների միջով, ВВГнг-LS-3x4մմ² Ø32:
Որպես պաշտպանիչ միջոց կիրառված է TN-C-S համակարգ: Դեպի նախագծվող արկղ ներանցվող եռաֆազ մալուխի PEN ջիղը բաժանվում է N և PE զրոյական և հողանցման ծողերի միջև; վերջինս կրկնակի հողանցվում է: Բացի այդ, հողանցվում են նաև հատակագծի վրա նշված սյուները: Եռաջիղ բաշխիչ մալուխը, ներանցելով հենասյան մեջ, միանում է՝

- ֆազային և N ջղերը-լուսատույին
- PE ջիղը-լուսատույի հողանցման սեղմակին և հենասյանը:

Տաղավարի էլեկտրամատակարարումն ու լուսավորումը ապահովվում է P1 արկղից սնուցվող 2 խմբերի (gr1, gr2) միջոցով, gr1 խումբը նախատեսված է վարդակների սնուցման համար, իսկ gr2-ը՝ վարդակների և լուսավորության:
Վահանը ընտրվել է ЩМП-60.60.20 տեսակի հետևյալ պարամետրերով՝ Pi,kW 2.4; Cd 1.0; Pr,kW 2.4; Ir,A 4.0:
Բոլոր 5 վարդակները և անջատիչը տեղադրված են տաղավարի ե/բ պատին՝ 1500 մմ բարձրության վրա:
Տաղավարի լուսավորումն ապահովվում է LED ժապավենով, որորնք սնվում են gr2 ից և ունեն սնուցման բլոկ (220/12Վ, 100Վտ):
Մուտքային հանգույցի ցուցանակը լուսավորվում է գծային լուսատուով և հագեցած է անջատիչով:
Տարածքի լուսավորությունը ապահովված է գրունտային արահետների երկայքով տեղադրված լուսատուներով, որոնք 29 հատ են:

## Նախահաշվային Մաս

Ներկայացված «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքում այգու իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում» օբյեկտի նախահաշվում փորձաքննությամբ դիտարկվել է շին.մոնտաժային աշխատանքների գնահաշվարկը՝ նախագծային ծավալներին համապատասխան, ըստ ծավալաթերթերի:

Շին.նյութերի արժեքները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրատարակված 2025թ. թիվ.N7 ինֆորմացիոն տեղեկագրից, կիրառելով հետևյալ տոկոսադրույքները՝

տրանսպորտային ծախսեր - 7%

պահեստավորման ծախսեր - 2%

այլ նյութեր - 5%

բոլոր ծախսերի վրա տրված է՝

վերադիր ծախսեր - 13.3%

շահույթ - 11%

Շին.նյութերի նյութածախսերը, աշխատավարձի և մեքենաների շահագործման նորմերը վերցված է 1984թ.նորմատիվներից և վերահաշվարկված ռուբլուց-դրամի անցման գործակիցներով, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրատարակված 2025թ. թիվ. N7 ինֆորմացիոն տեղեկագրի՝

աշխատավարձի մասով - 2458.44 դրամ,

մեք.շահագործման մասով - 3048.10 դրամ:

Լոկալ նախահաշիվների հիման վրա կազմվել է օբյեկտային նախահաշիվ, այնուհետև հավաք նախահաշիվ, համապատասխան լիմիտավորված տոկոսադրույքներով:

**Ծանոթություն՝**

**շինարարության ընթացքում օգտագործվող այն նյութերի արժեքները, որոնք ընդգրկված չեն ինֆորմացիոն տեղեկագրում կապալառուն պատվիրատուին պետք է ներկայացնի համապատասխան նյութերի հաշիվ ապրանքագրերը և նյութերի գները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:**

Շինարարության նախահաշվային արժեքը կազմել է՝ 50.357.73 հազ, դր. այդ թվում՝ ԱԱՀ 8.392.96 հազ.դր:

## Նախագիծը վերադարձվել է լրամշակման հետևյալ դիտողություններով

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ

1. Բացակայում է տարածքի սեփականության վկայականը և կադաստրային քարտեզը:
2. Բացակայում են հողային և/կամ քանդման ծավալները
3. Մարզասարքերի հիմքերի համար տալ տիպային ամրացման հանգույց, որում կերևա հիմքի տեղադրման խորությունը: Կամ քանի որ նշված հիմքերի իրականացման արժեքը ներառված է մարզասարքերի գնի մեջ, ապա ցուցումներում ավելացնել հիմքերի տեղադրման խորության մասին տեղեկատվություն:
4. Նախագծման թույլտվության առկայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել շինարարության կազմակերպման նախագիծ, օրացույցային գրաֆիկ և նախագծի կազմը համապատասխանեցնել ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանով սահմանված կանոններին:

### Կոնստրուկտորական մաս

Բացատրագրում նշված տվյալները թերի են, անհրաժեշտ է լրացուցիչ խմբագրել:

### Էլեկտրամատակարարման մաս

1.նախագծում նշված է՝ 3 դիրքային փոխանջատիչ LAY5-BJ33 – 1 հատ, իսկ ծավալաթերթում - 2 հատ :

2. նախագծում նշված է՝ մալուխ պղնձե 3x1.5 կտրվածքի ВВГнг-LS – 200 մ, իսկ ծավալաթերթում - 50 մ :

3. նախագծում նշված է՝ մալուխ պղնձե 3x2.5 կտրվածքի ВВГнг-LS – 50 մ, իսկ ծավալաթերթում - բացակայում է տվյալ մալուխը :

### Նախահաշվային Մաս

Նախահաշիվ 1-2

1) «Ստվերատար սիզամարգ» բաժնում 1-2 կետերը ճշտել 219.3 մ3-ը զգալի մասը պետք չէ ձեռքով իրականացնել:

2) «Տրավերտինե սրբատաշ սալերով ճեմուղի» բաժնում Տրավերտինե սրբատաշ սալեր 50մմ ոչ թե 273մ$^3$ է այլ 273մ$^2$, երեսապատման համար կարելի է կիրառել 11-221 նորմը, փոխել 1մ$^2$ տրավերտինե սալի արժեքը մոտ 5200 դրամ:
3) «Սրբատաշ բազալտե սալերով արահետ» բաժնում Բազալտե սրբատաշ սալերի իրականացում 50մմ հաստ բազալտ ոչ թե 21մ$^3$ է այլ 21մ$^2$ , երեսապատման համար կարելի է կիրառել 11-221 նորմը:
4) «Կարմիր ավազով խաղահրապարակ» բաժինը նախագծում առկա է սակայն նախահաշվում բացակայում է:
5) «Լուսատու /29հատ/» բաժնի 3-րդ կետի նորմը կրառված է 23-1 նորմով որը ավազի նախապատրաստական շերտի նորմն է փոխարինել խճի նախապատրաստական շերտի նորմով:
6) «Լուսատու /29հատ/» բաժնի 4-րդ կետը հողային աշխատանքը տրված է ձեռքով կիրառել որպես մեխանիզմով՝ (էքսկավատորով, կամ բուլդոզերով)
7) «Լուսատու /29հատ/» բաժնի 6-րդ կետերում 8-599-1 նորմի փոխարեն կարելի է կիրառել Ц8-370-1 նորմը՝ դրսում տեղադրվող լուսատուներ (աշխատավարձ-0.39 մեքենամեխանիզմ 0.69):
8) «Խաղահրապարակ» բաժնի բաժնի բոլոր տողերում՝ 1-8 չպետք է կիրառել այլ նյութերը, վերադիր ծախսերը և շահույթը:

ENGINEERING GROUP
08251257

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

15.01.2026թ-ին Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ի կողմից տրամադրվել է ՀՀ, Արարատի մարզ, Մասիս քաղաքում մարզական պուրակի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակված տարբերակը:

Փորձաքննության ընթացքում կատարված դիտողություններին համապատասխան նախագծի բոլոր բաժիններում կատարվել են ուղղումներ և լրացումներ:

Շինարարության նախահաշվային արժեքը փորձաքննությունից հետո կազմում է՝ 49.003.58հազ, դր. այդ թվում՝ ԱԱՀ 8.167.26հազ.դր:

Ըստ փորձաքննության՝ նախահաշիվը կազմված է ՀՀ կառավարության 23.06.2011թ. N879-ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան և երաշխավորվում է համաձայնեցման:

Երաշխավորվում է ներկայացված նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և կարող է պատվիրատուի կողմից սահմանված կարգով ներկայացվել համաձայնեցման:

Փորձագիտական խմբի անդամներ՝

Ա. Տոնոյան

Զ. Խլղաթյան

Մ. Ավագյան

Պ. Պետրոսյան

ENGINEERING GROUP
08251257